

Բարոյականութիւնը գլխաւորաբար հիմնուած է.-

- մարդկային արժանապատուութեան յարգանքի,
- բռնութեան մերժումի եւ
- տառապանքի մեղմացման վրայ:

Ինչպէս քննադատութիւնը, իր «*քննել ու դատել*» իմաստով, մեծ դեր ունի ընդհանրապէս փիլիսոփայութեան պարագային, նոյնպէս բարոյականութեան քննադատութիւնը, իր զանազան եղանակներով, մեծ դեր ունի բարոյագիտութեան ոլորտէն ներս:

Բարոյագիտութեան քննադատական գլխաւոր եղանակներն են.-

- բարոյագիտական յարաբերապաշտութիւնը,
- բարոյականութեան նպատակի դիմակազերծումը եւ
- արժէքափոխում բոլոր բարոյական արժէքներու:

Այս վերջին քննադատական եղանակի հեղինակն է՝ գերման փիլիսոփայ **Ֆրիտրիշ Նիցշէ** (Friedrich Nietzsche, 1844 – 1900 թ.), որ *բարոյականութեան քննադատութեան* մարզէն ներս թէ՛ հանրածանօթ եւ թէ՛ վիճելի անուն մըն է (տե՛ս Մաս – 6, էջ 235):

Այլ անհատներու կամ խմբակցութիւններու բարոյական արժէքներուն հանդէպ հանդուրժողութիւն ցոյց տալով, պէտք չէ հրաժարիլ սեփական բարոյական հիմնական արժէքներէն: Բարոյականութիւնը, արդար ըլլալու համար, պէտք է հակամէտ ըլլայ որոշ փոփոխութիւններու եւ քննադատութիւններու, նկատի ունենալով որ մարդիկ եւ ընկերութիւններ ժամանակի ընթացքին եւս փոփոխութեան ենթակայ են ու կը փոխուին:

Բարոյականութիւնը իր իւրայատուկ տեղը ունի նաեւ՝ ընկերաբանութեան, հոգեբանութեան եւ աստուածաբանութեան մարզերէն ներս: Աւանդականօրէն, բարոյական կարեւոր հեղինակութիւն կը վայելէ նաեւ կրօնը. հոն եւս կ'ընտելանուի՝ *աստուածաբանական բարոյագիտութիւնը*:



## ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Այժմ հարց տանք, թէ ի՞նչ է *փիլիսոփայական բարոյագիտութիւնը*:

*Բարոյագիտութիւնը* (Էթիկա, յուն.՝ êthikê, լատ.՝ ethica, անգլ.՝ Ethics, գերմ.՝ Ethik) փիլիսոփայութեան այն ճիւղն է, որ կը զբաղի մարդոց վարմունքով, մանաւանդ այդ վարմունքի *բարի* նպատակադրումով եւ անոր արդարացումով ու հիմնաւորումով, ինչպէս նաեւ անոր հիմքերու եւ հետեւանքներու գնահատումով:

Փիլիսոփայութիւնը բաժնուած է երկու գլխաւոր մասերու՝ տեսական եւ գործնական: Բարոյագիտութիւնը գործնական փիլիսոփայութեան կարեւոր մէկ ճիւղն է. իսկ տեսական փիլիսոփայութեան, գլխաւորաբար մաս կը կազ-